Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

II 1/39

ՀԱՄԱՌՕՏ ՆԿԱՐԱԳԻՐ

ՀՈՌՈՂԱՅՆԸՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԷ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՒՈՅ

Շ. ԱԲԱԴԻԵՑ Ս. Վ. Հ.

Գրադարան Գեղարվեստի Պետական Թանգարանի

ԿՈՍՏԱՆԴԻՆՈՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻԼՀԷՆՏԻՍԵԱՆ

1864

Սերբ
771

2010

Սերբ.
771

ՀԱՄԱՌՕՏ ՆԿԱՐԱԳԻՐ

ՀՌՈՄԷԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԷ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՀԱՐԱԴՐԵՑ Ս. Վ. Հ.

1629

ԿՈՍՏԱՆԴԻՈՊՕԼԻՍ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻՒՀԷՆՏԻՍԵԱՆ

1864

771-2010

(4457
41)

18766

ՀԱՄԱՌՕՏ ՆԿԱՐԱԳԻՐ

ՀՌՈՄԷԱԿԱՆ ՈՒՂՂԱՓԱՌ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԷ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Քրիստոսի ուղղափառ և Առաքելական Եկեղեցիին Հռոմէական անունը տալը, կարելի է՝ որ ոմանց անգէպ և անպատշաճ բան մը երևնայ. կամ թէ Քրիստոսի հիմնած և Առաքեալներուն քարոզած ուղղափառ Եկեղեցիին զատ և ուրիշ բան մը, և նոր եկած հաւատք մը երևնայ, բայց իսկապէս ատանկ չէ։ Նոր եկած հաւատք չէ և չկրնար ըլլալ, վասն զի թէպէտ ամէն գիտութեան և արհեստներու եռքէն եկած հեղինակը կամ գիրքը առջիններէն աւելի կատարեալ կ'ըլլայ, բայց հաւատքը Աստուծոյ խօսքը ըլլալուն համար՝ անփոփոխ պէտք է ըլլալ. ուստի և եռքէն եկածը սուտ է, և առաջինը ճշմարիտ։ Եւ Քրիստոսի հիմնած և Առաքելոց քարոզած հաւատքէն ալ ամենեւին զատ և տարբեր բան մը չէ, այլ մանաւանդ նոյն ինքն Աստուծոյ հաւատքն է։ Հապա ինչու Հռոմէական կըսուի, ահա այս է պատճառը։ Առաքելք ներուն ատենը հաւատքին անունը գրուեցաւ Քրիստոնէութիւն. և այս անունով Քրիստոսի ճշմարիտ և անխարդախ հաւատքը կ'իմացուէր. բայց քիչ ատենէն եռքը՝ երբոր հերետիկոսներ եկան, որոնք Քրիստոսի հաւատքին մէջը մոլորութիւններ խառնեցին, անոնք ալ Քրիստոս դաւանելնուն համար քրիստոնեայ կրնային ըսուիլ, ան ատեն հարկ եղաւ, որ Քրիստոսի ճշմարիտ եկեղեցին անունցմէ որոշելու համար՝ ճշմարիտ Եկեղեցիին Ուղղափառ և Առաքելական անունը տան։ Բայց շատ մը ժամանակ անցնելէն եռքը եկան անանկ հերետիկոսներ ալ, որոնք ուղղափառ (օրթոտոքս) անուանէն ալ՝ Առաքելականէն ալ չհրաժարեցան, և վրանին կ'կրեն. անոր համար Քրիստոսի ճշմ-

մարիա Եկեղեցին ասոնցմէ ալ որոշելու համար հարկ եղաւ, որ ան Եկեղեցիին գլխաւոր Լիթուրգն հաստատուած քաղքին անուանէն Հռոմէական ըսուի։ Եւ թէպէտ Կաթողիկէ և Առաքելական և ուրիշ անուններ տալով ալ կրնար բացատրուիլ. բայց ամէն իմիր ալ երկմտութիւն կրնար մտնալ խօսքին մէջը, և հասկնալու դժուարութիւն՝ նաև խօսքի երկարութիւն։ Եւ տի այս ամէն դժուարութիւնները մէկ դի ընելով՝ մէկ խօսքով առանց տարակուսանաց հասկնալու համար՝ մեր մէջը սովորութիւն եղած է Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցին Հռոմէական կոչելը։ Բայց ասանկ կոչելով՝ մէկալ անուններէն ալ չեմք հրաժարած, վասն զի գիտենք և կ'ընդունինք, որ աս Հռոմէական Եկեղեցին է միանգամայն ճշմարիտ Քրիստոնէական, Առաքելական, Ուղղափառ, Կաթողիկէ, մի սուրբ, և՛ն, և՛ն։

Հռոմէական սուրբ Եկեղեցւոյն Նկարագիրը՝ կամ թէ յաւէտ Նշանները այս չորս յատկութիւններն են՝ ինչպէս յայտնի է. այսինքն՝ Սրբութիւն, Միութիւն, Ընդհանրականութիւն, և Առաքելականութիւն. որոնցմէ մէկն ալ չգտնուիր հերձեալ եկեղեցիներուն վրայ։ Բայց ես աս Նկարագրիս մէջ այս չորս յատկութիւնները իբրև ամէնուն յայտնի բան, մէկ դի ձգելով *, ուրիշ չորս բանի վրայ պիտոր ընեմ Նկարագիրս, որ են այս բաներս։

Ա. Հռոմէական սուրբ Եկեղեցւոյն Նկարագիրն է՝ սուրբ Գիրքերուն ճիշդ և ըստ ուղիղ մեկնութեան հետեւող ու թարգման ըլլալն, և սուրբ Գրոց հակառակ եղածն հերքելը,

Բ. Եկեղեցւոյ անդամներուն իրարու հետ սքանչելի կապակցութիւնն, և ամէնուն 'ի մի գլուխ աւարտումն։

Գ. Ամենայն առաքինութեանց մայր և դայեակ ըլլալն։

Դ. Աստուծոյ և Քրիստոսի բռնած ճամբայներուն ճիշդ նմանողութիւն։

---

* Ս. Եկեղեցւոյ աս չորս յատկութիւնները կարդալու կը հրաւիրենք յարգոյ ընթերցողները Հ. Երդուարդ Շիրակայ Արքեպիսկոպոսին տեսական Աստուածաբանութեան մէջը. հատոր Ա. երես 159։ Տրաքիօրկ եղած աղանդոյ հայերէն թարգմանութեան մէջ. պրամախօսութիւն Գ. և Դ.

Ա. Ս. ԳԻՐՔԻՆ ՃԻՇԴ ՀԵՏԵՒՈՂՈՒԹԻՒՆ

Ինչպէս որ սուրբ Գիրքը Եկեղեցիին հիմն է, մնա-նաւանդ թէ կանոն և սահման հաւատոյ և բարի վա-րուց. անանկ ալ սուրբ Եկեղեցին սուրբ գիրքին յե-նարանն է, անոր հաստատութիւնն է և անոր շիտակ հասկցուելուն և գործածուելուն միջոցն է։ Եւ այս միտքի վրայ շատ աղէկ կ'յարմարի անօթ ընտրութեան Առաքելոյն այն գեղեցիկ և իմաստալից խօսքը, որ կ'ըսէ «Եկեղեցի Աստուծոյ՝ սիւն և հաստատութիւն ճըշ-մարտութեան»։ (Ա. Տիմ. Գ. 15)։ Երբ որ ճըշ-մարտութիւն ըսածը առնումք սուրբ Գիրքի վրայ, որ է իսկապէս ճշմարտութիւն. և սիւն և հաստատու-թիւնը առնումք Եկեղեցիի վրայ, ինչպէս որ հարկ է խօսքին ձևէն, ան ատեն այս ճշմարիտ և գեղեցիկ իմաստը կ'ելլայ, թէ Եկեղեցին է սիւն և հաստատու-թիւն սուրբ Գրոց։ Եւ առ խօսքն ալ ասանկ կ'բացատրուի. թէպէտ սուրբ Գիրքն է իսկապէս ճշմարտու-թիւն և անսխալելի վարդապետութիւն իրեն մէջ, բայց երբոր նոյն ճշմարտութիւնը ըստ ճշմարիտ մտաց հասկցող՝ մեկնող և հասկցնող մը չըլլայ նէ, անոր ճըշ-մարտութիւնը կայլայլի մարդկանց մէջ, և թէև ինք չսխալիր, բայց մարդիկ անոր պատճառաւ կ'սխալին։ Եւ երբոր սուրբ Գիրքին բարոյական խրատները և վարդապետութիւնները սորվեցնող, բացատրող և ի գործ դնել տուող մը չըլլայ, այն սքանչելի վարդա-պետութիւնները բոլորովին անօգուտ կ'ըլլան մարդ-կանց համար. և նոյն սուրբ Գիրքին մէջ թաղուած կը մնան. երբեմն ալ սխալ հասկցուելով՝ վնաս ալ կ'բե-րեն։ Ուստի Եկեղեցին կ'ըլլայ սուրբ Գիրքին պահա-պան, թարգման՝ մեկնող, գործադրել տուող, և անոր իշխանութիւնը և ճշմարտութիւնը քարեցնող։ (Ասանկ է ամենևին թագաւորութեանց մէջ ալ օրէնքի գիրքե-րը, որոնք թէպէտ ամէն գործողութիւն կարգի կանո-

նի տակ կ'դնեն, բայց իրենք զանոնք քալեցնելու մեռ-
եալ են. և դարձադրութեանը վրայ դատաւորներ և
ատենակալներ դրուած են։ Բայց թագաւորութիւնը
աղէկ երթալու համար՝ ինչչափ պէտք է՝ որ օրինա-
գիրքը աղէկ կարգադրած ըլլայ, այնչափ ալ պէտք է՝
որ դատաւորները օրէնքին հրամանները աղէկ քալե-
ցընեն)։

Սուրբ Հռոմէական Եկեղեցին աս իրեն յանձ-
նուած իշխանութիւնը և պարտական եղած պաշտօնը
աղէկ ճանչնալով՝ 'ի սկզբանէ առաքելոց ժամանակէն
մինչև հիմայ անարատութեամբ կատարած է այս պաշ-
տօնը։ Մէկալ ազգաց եկեղեցիներն ալ՝ երբ որ Հռո-
մայի հետ միարան էին, անոր հետ մէկտեղ անոնք ալ
սուրբ Գիրքը կ'յարգէին, և ըստ ճշմարիտ մտաց կը
մեկնէին, և անոր ճշմարտութիւնը կ'քալեցնէին. բայց
երբոր Հռոմէական Եկեղեցիէն մէյմը բաժնուելով
սխալեցան, անկէ ետքը սուրբ Գիրքին շատ մը տեղե-
րուն սխալ մեկնութիւն տալու հարկաւորած են. նաև
իրենց ուղղափառ հարցը թողած գրուածներուն ալ։

Սուրբ Եկեղեցիին ջանքը ան է՝ որ սուրբ Գիրքին
ամէն մէկ խօսքին ճիշդ իմաստը հասկնայ հոգւոյն
սրբոյ զօրութեամբը. որ իր վրայէն պակաս եղած չէ
ամենևին. և այնպէս ալ սորվեցնէ հաւատացեալնե-
րուն։ Իւ աս բանս ճիշդ և կատարեալ ըլլալու հա-
մար պէտք է, որ սուրբ Գիրքին իրարու նման խօս-
քերը՝ թէպէտ իրարմէ տեղեաւ հեռաւոր ըլլան, ի-
րարու հետ բաղդատուին, որ երկուքին ալ իմաս-
տը լուսաւորուի։ Նաև Աւանդութեան հետ ալ
բաղդատուին։ Այս ասանկ ըրած է սուրբ Եկեղեցին
ալ, և ամէն իժիր կ'ընէ։ Այս թէ ոչ սուրբ Գիրքին
մէկ խօսքը մինակ քննելու ըլլայ նէ, երբեմն սխալ
մեկնութիւն և իմաստ կ'ելլայ անկէ։ Իւ ամէն հին և
նոր հերետիկոսները որ սխալեր են, այս պատճառաւ
սխալեր են, այսինքն՝ սուրբ Գիրքին մէկ խօսքը քն-
նելու ատեն՝ մէկալ խօսքը մոռցեր են, կամ փոյթ չէն

ղրեր իրարու հետ բաղդատելու։ Եւ սուրբ Եկեղեցին՝ որ սուրբ Գիրքին վրայ պահապան և Թարգմանն և մեկնիչ ըլլալու պարտաւորութիւնը և իշխանութիւնը ունի Աստուծմէ, այն հերետիկոսները՝ ի դատ կոչեր է սուրբ ժողովներու մէջ, և Գիրքին շիտակ խօսքերովը զանոնք յանդիմանելով՝ չհաւանողները բանադրանքով որոշեր հաներ է իր մէջէն, որպէսզի սխալ իմաստը մէկ հերետիկոսէն ամէն ժողովուրդին ալ տարածուելով՝ սուրբ Գիրքին իմաստը սխալ չհասկցուի, անոր յարգը ճշմարտութիւնը չկորսուի, և ժողովուրդին հոգիներուն վնաս չգայ։

Այս ըսած խօսքերնիս՝ որ վերացեալ և անմարմին բանի մը կ'նմանի, քիչ մը մարմնաւորելու համար՝ որ աչքի երևնայ և ճանչցուի, կ'ուզեմ հին և նոր եկեղեցական պատմութիւններէն քանի մը օրինակ հոս դնել. բայց ոչ ամէն եղածները մինչև հիմայ, և ոչ ալ սուրբ Գիրքին ամէն դժուարին և խորին տեղերուն մեկնութիւնը, վասն զի այն գործքը զատ հատոր մը կ'ուզէ։ Արիոս հերետիկոսապետն՝ Աղեքսանդրիոյ "վասն աւուրն այնորիկ ոչ ոք գիտէ և ոչ որդի մարդոյ" ըսելը՝ սխալ հասկնալով ըսաւ՝ թէ քրիստոս ասուած չէ. ա-նոր հակառակ սուրբ ժողովն Նիկիոյ Աղեքսանդրիոյ ան-թիւ խօսքերէն Քրիստոսի Աստուածութիւնը հաստատելով, այն խօսքին ալ մեկնութիւնը տուաւ, թէ աշխարհքիս վերջին օրը չգիտեր ըսելը մարդկութեան դիէն ըսուած է, ապա թէ ոչ՝ Աստուածութեամբը գիտէ Քրիստոս։ Մակեդոն Հոգին սուրբին Աստուածութիւնը ուրացաւ. սուրբ Գիրքին քիչ անգամ յիշելուն համար ղանի։ Կամ թէ, "չէ էր հոգի, քանզի Յիսուս չէ էր փառաւորեալ" ըսելէն. բայց ժողովն Կոստանդնուպօլսոյ սուրբ Գրոց շատ տեղերը քննելով և շիտակ մեկնութիւններ տալով՝ հաստատեց հոգւոյն սրբոյ Աստուածութիւնը, և հերքեց անօրենութեան աղանդը։

Նեստորիոս ուրացաւ Քրիստոսի երկու բնութիւնը,

և սուրբ Ժողովն Քաղքեդոնի ազգէկ քննեց բնութիւն բառը, և սուրբ Գրոց զօրութիւնը, և սահմանեց՝ թէ երկու բնութիւն և մի անձն է 'ի Քրիստոս։

Գանք նորերուն վրայ։ Բողոքականները՝ սուրբ Հաղորդութիւնը պարապ հանեցին, և միայն օրինակ է ըսին, սուրբ Գիրքին խօսքերուն ծուռ մուռ մեկնութիւններ տալով. սուրբ Եկեղեցին 'ի Ժողովն Տրիտենդինոյ բարակ քննեց սուրբ Աւետարանին խօսքերը, և վճռեց որ սուրբ Հաղորդութիւնն է ճշմարիտ մարմին և արիւն Քրիստոսի։

Նոյն Բողոքականները՝ սուրբ Գիրքին առ խօսքէն «մի է միջնորդ Աստուծոյ և մարդկան՝ մարդն Յիսուս Քրիստոս», սխալ հետևցուցին՝ թէ սուրբերը ամենևին չեն կրնար բարեխօս ըլլալ մարդկանց համար. բայց սուրբ Եկեղեցին՝ որ սուրբ Գիրքին ուրիշ աղերսէն գիտէր, սուրբերը կրնան բարեխօս ըլլալ, այն վերը ըսուած խօսքին մեկնութիւնը տուաւ՝ ասանկ ըսելով. երկու կերպ բարեխօսութիւն կայ, մէյ մը մինակ խօսքով, մէյ մըն ալ պարտաւորին պարտքը հատուցանելով. սուրբերը առջի կերպով միայն բարեխօս կ'ըլլան. իսկ երկրորդ կերպով՝ միայն Քրիստոս, «որ ետ զանձն փրկանս ընդ ամենեցուն». (Ա Տիմ. Բ. 6.) ինչպէս վերը յիշուած խօսքին տակը անմիջապէս գրուած կայ։

Սուրբ Աստուածածնայ կուսութիւնը ուրացան, անոր համար որ Քրիստոս անոր «կին դու» ըսաւ. բայց մոռցեր էին «Հոգին Սուրբ եկեսցէ 'ի քեզ» խօսքը, և «ահա կոյս յղասցի» մարգարէութիւնը։ Եկեղեցին ասանք հաստատելով, կին դու ըսելուն մեկնութիւնը տուաւ՝ ըսելով, մարդիկ զսուրբ Կոյսը կին և հասարակ կերպով մայր կ'ճանչնային, և ատենը չէր անոր կուսութիւնը յայտնելուն, որ հաւատքի մեկ խորին խորհուրդն էր։

Բողոքականները Աւաքեանցերուն ժամանակին բոլոր արարողական մասերը պահեցին, զոր օրինակ՝ հա-

ւատացեալներուն ժողովը, ազգայը, յանկարծական քարոզութիւնը, անզարդ կերպով պատարագ ընելը, և այլն։ Եկեղեցին՝ որ «աՀէ 'ի տաՀար սուրբ տերամբ» (Եփես. Բ. 21) ըսելէն գիտէր՝ թէ արարողութիւնները անփոփոխ չեն, (միայն հաւատքն անփոփոխ է), քանի որ հաւատքը աղատութիւն գտաւ, և մեծ մեծ ժամեր շինուեցան, երթալով զարդարեց արարողութիւնները, պատարագի ղգեստներ հնարեց, և զանազան աղօթքներ շարադրեց, աւելի ետքը շարականներ և երգեր հնարեց, և անոնցմով և կերպ կերպ հանդէսներով բոլոր պաշտամունքը զարդարեց։ Իսկ Ռոմբականներ տգիտութեան անզարդութեան մէջ և կամակորութեան խաւարին մէջ կը մնան, և անկէ առաջ չեն կրնար երթալ։ Ահա ասոր նման անթիւ են Եկեղեցւոյն գործքերը, որով սուրբ Դիրքին խօսքերուն բարակ մեկնութիւն տալով՝ անոր հակառակորդները հերքեց։ Այս գործքով Եկեղեցին հաւատքը անվնաս պահեց մինչև հիմայ. որ եթէ այս ճշդութիւնը բռնած չըլլար, ինչուան հիմայ հազար անգամ հաւատքին անարատութիւնը կորսուած էր։ Վասն զի հաւատքին ճշմարտութեանը մէջ պզտըտիկ պակասութիւն մը կամ սխալ մը խառնուի նէ, անկէ ետքը դիւրաւ սխալմունքէ սխալմունք ինկալով, կրնար ըլլալ որ քիչ ժամանակի մէջ հաւատքը բոլորովին տակն ու վրայ ըլլար. և մինչև Յատուծոյ ճանաչումն ալ՝ և սուրբ Դիրքին հեղինակութիւնն ալ ջնջուէր մարդկանց մէջէն։

Կ'զարմանամ հիմակուան քրիստոնեայներուն մէջէն ոմանց վրայ, որ կ'ուզեն աս ճշդութիւնը վերցնել Եկեղեցիին վրայէն. կ'ուզեն՝ որ Եկեղեցին ալ իրենց պէս հաստ հաստ կարծիքներ ունենայ, բարակ քննութիւնները չընէ, երկու իրարու նման բանը մէկ մէկու հետ միացնէ, ազգի մը երկու հատուածքը՝ որ ազգաւ և լեզուաւ մէկ են, կ'ուզեն՝ որ հաւատքնին ալ ինչչափ իրարմէ տարբեր ըլլան, երկուքը մէկ է՝

ըսուի։ Բայց Հռոմէական եկեղեցիին համար աս բան նը անկարելի է։ Այն եկեղեցին հաւատքի գիտութիւնը փիլիսոփայութենէն ալ և ամէն մարդկային գիտութիւններէ բարակ և բարձր կ'բռնէ. և բարակ ընտրութիւն և դատաստան ընելէն ամենեւին չկրնար դադրիլ. իսկ հասարը մտմըտացողները իրենց անխորհուրդ միտքին հետեւելով, և իրենց աշխարհային կըշռոքովը Աստուածային բաները կշռելով կը սխալին, երթալով աւելի հաստ կարծիքներու մէջ կ'ինան, և վերջապէս մոլութիւններու խորունկ անդունդները կը գլտորին։

Բ. ԳԼԽՈՑ ՈՒ ԱՆԴԱՄՆԵՐՈՒ ԿԱՏԱՐԵԱԼ ԿԱՊԱԿՑՈՒԹԻՒՆ

Հռոմէական սուրբ հաւատքին ամէն ազգերու մէջ մտած ըլլալը՝ և աշխարհքին չորս դին՝ և վերու վար՝ ամէն տեղ դանուելը ամէնուն յայտնի բան է. բայց մեր ըսելիքը աս չէ. այլ մեր խօսքը կ'դիմէ յայտնելու, թէ նոյն հաւատքին հարիւրներով միլիոնաւոր ժողովուրդը՝ որոնք իրարմէ հազարաւոր մղոններով հեռու կ'բնակին, և կերպ կերպ հարիւրաւոր լեզուներով կ'տարբերին, և իրարու հակառակ քաղաքական սովորութիւններով իրարմէ բաժնուած են, աս ժողովրդին ամէն մէկ անդամը՝ և իրենց միմիայն գլուխը՝ ամէնն ալ մէկմէկու հետ սքանչելի կապով մը հիւսուած և կապուած են մէջերնին։

Այսպէս՝ կապուած են մէջերնին պաւանութեան միութիւնովը, վասն զի ամէնուն հաւատացածը ու դաւանածը մի և նոյն հաւատքն է. և հաւատքի ազիտութիւն շատ քիչ տեղ և շատ քիչ ժողովրդի մէջ գտնուելովը՝ գրեթէ ամէնքն ալ գիտութեամբ և յօժար կամօք կ'հաւատան մի և նոյն դաւանութեանը։ Այս թէ գտնուին մէջերնին անանկ մարդիկ՝ որ երիտասարդական կամակորութիւնով ապախտ ընեն հաւատքին քանի

մը հատուածները, անոնք ալ իրենց հաւատքին աւելի ուրիշ համոզումներու հաւատք մը չգտնալով, և օտար աղանդները իրենց անարժան սեպելով, կ'կենան կ'մնան իրենց հայրենական կաթողիկէ եկեղեցւոյն մէջ։ Այս այսպիսիները կ'համարուին եկեղեցիին հիւանդ անդամներ, որոնց առողջութեան համար շատ կերպ դեղ և դարման կ'գործածէ եկեղեցին. մինչև որ անոնցմէ ալ շատը կամ ողջութեան ատենին, կամ գոնէ մեռնելու ատենը կ'առողջանան, և իրենց առջի կամակորութեան և յանցաւորութեան վրայ կ'զղջան, և Թողութիւն գտնալով՝ նորէն կ'մտնան եկեղեցիի անդամներուն կապակցութեան հիւսուածքին մէջ։

Հերձեալ եկեղեցիներն ամենեին ասանկ չեն։ Մեկդի ձգենք ըսելը՝ թէ աս հերձեալներուն մէկն ալ աշխարհքին ամէն դին և ամէն ազգի մէջ ժողովուրդ չունի. և գանք դաւանութեան միակերպութեան վրայ։ Ասոնց հասարակ ժողովուրդը անանկ թանձր տգիտութեան մէջ է, որ մէկ ծուռ խաչ հանելէն ուրիշ քրիստոնէութեան նշան մը և պարտք մը չեն ճանչնար. Աստուծոյ միութիւնը հաղիւ թէ գիտեն. անձանց երրորդութեան և որդւոյն Աստուծոյ մարմնաւորութեան դան նէ, հեռաւոր քաղաքներուն աշխարհագրական գիտելիք մը կ'երևնայ իրենց. ուստի ասոնք թող տալով՝ գանք ան ժողովրդեան գիտնական մասին, որոնք շատ քիչ են։ Ասոնք ալ թէև գիտնան հաւատալիքներուն ամէնն ալ, այսու ամենայնիւ՝ երբոր կուգան ան կտորներուն, որոնցմով Հռոմէական եկեղեցիին տարբեր են, ան կտորներուն վրայ ամէն մէկուն պատասխանը և կարծիքը ուրիշ ուրիշ կերպով է. զորօրինակ, Յոյներու հարցուցի նէ կրկին մկրտելու վրայ, մէկը արժան է կ'ըսէ, մէկալը արժան չէ, բայց սուրբութիւն եղեր է մէջերնիս կ'ըսէ, և այլ մէկալը. հիմայ նորէն մկրտելը վերցուցած ենք՝ կ'ըսէ. ևն։ Որ և իցէ հերձեալ եկեղեցիին հարցուցի նէ եկեղեցւոյ գլխուն միութեան վրայ, իւղոյ հիւանդաց վրայ, հան-

գերձեալ աշխարհքը մեղաց թողութեան վրայ, հաւատոյն սրբոյ բղխման վրայ, ևն. ամենուն պատասխանը մի և նոյն կերպով չէ, հապա ամենուն ալ իրարմէ տարբեր, իրարմէ հեռաւոր, իրարու հակառակ, և ամենն ալ ընդ տարակուսանաց. վերջապէս՝ ամենուն պատասխանն ալ մանաւոր կարծիք, և ոչ ընդհանուր վարդապետութիւն։

Երկրորդ՝ Հռոմէական Եկեղեցիին անդամները իրարու հետ կապուած են սիրով, վասն զի ինչ սիրով որ կ'սիրեն իրենց հաւատքը իբրև ճշմարտութիւն և Աստուծմէ սորվեցուցած վարդապետութիւն, նոյն սիրով ալ իրար կ'սիրեն՝ նոյն ճշմարտութիւնը իրարու վրայ տեսնալնուն համար. և թէև ազգաւ՝ լեզուաւ՝ թագաւորութեամբ, բնակութեամբ, սովորութեամբ մէկզմէկ տարբեր կ'տեսնան, բայց ճշմարտութիւնը և ճշմարտութեան սէրը շատ մեծ և զօրաւոր բան ըլլալով՝ իրենց հաւատակիցներն ալ մեծ ու զօրաւոր սիրով մը կ'սիրեն. և այնչափ մեծ, որ թէև ազգայինները ազգային սիրով, և քաղաքակիցներն քաղաքակցութեան սիրով սիրեն, դիպուածը կ'բերէ, որ հաւատքի սէրը ամէն սէրէն մեծ ըլլալը կ'ցուցուի։

Այս ճշմարտութեան սէրն ալ չերևնար հերձեալ եկեղեցիներու վրայ. վասն զի չենք տեսներ անանկ դիպուածներ, որ հաւատքի սիրու համար ուրիշ ամէն սէրերը երեսի վրայ ձգուի, և ոտքի տակ առնուի։

Երրորդ՝ կապած են այս Հռոմէական ժողովուրդը իրենց հովիւներուն հետ՝ ոչ միայն դաւանութեան միակերպութիւնով և սիրով, ինչպէս իրարու հետ. այլ նաև հնազանդութիւնով. վասն զի իրենց հովիւները Աստուծոյ կողմէն դրած վերակացու և հոգիներու խնամող սեպելով, իրենց հոգևոր պէտքը անոնց կը յայտնեն, և անոնց խրատներուն ետևէն կ'երթան։

Չորրորդ՝ Հռոմէական եկեղեցիին անդամները իրարու հետ կապած են նաև իրենց գլխուն մէկ ըլլալով։ Այս սուրբ Եկեղեցիին անդամները իրարու և ի-

բենց հովիւներուն հետ սուրբ սիրով և դաւանութեան միակերպութիւնով և հնազանդութիւնով կապուած ըլլալէն զատ, իրենց գլուխն ալ մէկ ըլլալով՝ նորէն ամէնն ալ իրարու հետ, և ամէնն ալ այն ծայրագոյն գլխուն հետ կապած և միաւորած են։ Եւ իրենց ծայրագոյն գլուխն ալ ամէն մէկ անդամի հետ նոյնպէս միաւորուած է։

Այո՛ ամէն մէկ պզտիկ գեղը, կամ քաղքի մը պզտիկ թաղը քահանայ մը կ'ունենայ, կամ թէ մեծ թաղի մը քանի մը քահանայները մեծաւոր մը կ'ունենան. պզտիկ քաղաք մը եպիսկոպոս մը կ'ունենայ. մեծ քաղաքը արքեպիսկոպոս մը կ'ունենայ. ամէն մէկ ուղղափառ ազգը կաթողիկոս մը՝ կամ պատրիարք մը կ'ունենայ. բայց անոնց մէջը չկայ մէկը, որ կապակցութեան շարքէն դուրս մնացած ըլլայ։ Այս գեղին քահանայն և քաղքին քահանայները եպիսկոպոսին իշխանութեան տակն են, եպիսկոպոսը արքեպիսկոպոսին արքեպիսկոպոսները պատրիարքին, կամ Նախագահին։ Եւ ամէն ազգերու պատրիարքները կամ կաթողիկոսները կամ Նախագահները ծայրագոյն գլխուն իշխանութեան տակն են, որ է Հռոմայ ծայրագոյն Քահանայապետը և Յիսուսի Քրիստոսի փոխանորդը։ Եւ ասով ամէնքն ալ իրարու հետ կապած են, ոչ միայն իշխանութեամբ, այլ և սիրով և միութեամբ հաւատոյ։ Եւ երբ որ աշխարհքիս վրայ ասանկ իրարու հետ, և Քրիստոսի փոխանորդին հետ միաւորուած են, յայտնի կ'ըլլայ՝ որ Քրիստոսի հետ ալ կապուած և միաւորուած են, թէև անիկայ երկինքը ելլայ, և եկեղեցին երկրիս վրայ. վասն զի Քրիստոս ալ կապուած է իր փոխանորդին հետ, անով որ՝ երկինք ելած ատենը իրեն փոխանորդ դրած է Պետրոսը և Պետրոսին յաջորդ Հռոմայ Հայրապետները, "արա՛ ծեա՛ ղոչխարս իմ" ըսելով։

Քրիստոսի միաւորուած ըլլալը եկեղեցիին հետ՝ Քրիստոսին առ խօսքին մէջը յայտնապէս կ'երևնա

Առաքեալներէն զատուելուն մօտ և վերջին խօսքերուն մէջը ըսած է Հօր Աստուծոյ. «աղաչեմ... զի ամենեքին մի իցեն. որպէս դու Հայր յիս, և ես ի քեզ, զի և նոքա ի մեզ իցեն։... Իս ի նոսա, և դու յիս, զի եղիցին կատարեալք ի մի» (Յովհ. ԺԷ. 20. 23)։ Այս խօսքով ոչ միայն կ'հետևի, որ եկեղեցին Քրիստոսի հետ միաւորեալ և կապակցեալ է, այլ և կ'հետևի, որ Հօր Աստուծոյ և Հոգւոյն սրբոյ հետ ալ միաւորուած է. վասն զի Քրիստոս կրնէ, ինչպէս ես քեզի հետ միաւորուած եմ, նմանապէս անոնք ալ ինծի հետ միաւորուած ըլլան, որպէս զի ամենքս ալ կատարելապէս մէկ ըլլանք։ Իբ որովհետև Քրիստոս Հօր Աստուծոյ հետ ինչպէս միաւորած է նէ, Հոգւոյն սրբոյ հետ ալ անանկ միաւորած է. ուրեմն սուրբ Եկեղեցին ալ Հոգւոյն սրբոյ հետ ալ միաւորուած է։ Բայց թէ աս կապակցութեան և միաւորութեան մէջ որ և ի՞նչպէս անդամները կ'մտնան, ան ալ կ'յայտնէ Քրիստոս՝ ըսելով. «ոչ վասն նոցա միայն աղաչեմ (այսինքն վասն առաքելոց), այլ և վասն ամենայն հաւատացելոց բանիւն նոցա յիս» (անդ)։ Ասով կուզէ հասկնել, թէ միայն առաքեալներու համար չէ այս միաւորութիւնը, հապա անոնց ժամանակը եղած ամէն հաւատացեալներուն համար ալ. և ոչ միայն ան ժամանակի հաւատացեալներուն, հապա մինչև աշխարհքին վերջը գալիք հաւատացեալներուն, որոնք ամէնն ալ կամ անմիջապէս կամ միջնորդութեամբ առաքեալներուն խօսքովը հաւատացին Քրիստոսի։

Քրիստոս աս խօսքերուս մէջ միութիւնը այսչափ բարձրացնելէն, նաև «մի հօտ և մի հովիւ» խօսքէն հարկաւորապէս կ'հետևցնեմ, որ Հռոմէական սուրբ Եկեղեցին աս կապակցութիւնով և աս միութիւնով եղած է Քրիստոսի ժողովուրդը կամ հօտը։ Զեմ ըսեր՝ թէ Հռոմէական Եկեղեցին ասկից ուրիշ նշան չունի իր վրան՝ Քրիստոսի ժողովուրդը ըլլալուն, այլ կ'ըսեմ՝ թէ ասկից մեծ նշան չունի։

Հռոմէական եկեղեցիէն զատ հերձուած եկեղեցի-ներէն մէկն ալ աս կապակցութիւնը ու միութիւնը չու-նի։ Վասն զի թէև ստորին ժողովուրդը քահանային հետ, և քահանայն Եպիսկոպոսին և Պատրիարքին կամ Կա-թողիկոսին հետ կապակցութիւն ունենայ, անկից ետ-քը կապակցութիւնը կ'կորի։ Կաթողիկոսը կամ Պատ-րիարքը իրմէ մեծի հետ կապակցութիւն չունի։ Եւ երբոր ասանկ ամէն հերձեալ ազգերու Պատրիարքնե-րը ուրիշի հետ կապակցութիւն չունին, ամէն Պատ-րիարքները կ'մնան ինքնագլուխ. և ասով քանի քրիս-տոնեայ ազգ կայ նէ աշխարհքիս վրայ, նոյնչափ ալ գլուխ և հովիւ կըլլայ, որ Քրիստոսի պահանջած թէ-ութեանը հակառակ կուգայ, «եղիցի ժողովուրդ իմ մի հօտ՝ և մի հովիւ» կ'ըսէ։ Այս եղաւ մէկ կապակ-ցութեան պակասութիւն։

Երկրորդ պակասութիւնն ալ աս է, որ այն ազգե-րու հովիւներն ալ՝ որ Պատրիարք կամ Կաթողիկոս կ'ըսուին, անոնք ալ իրարու հետ կապակցութիւն չու-նին, (ինչպէս Հռոմէականները ունին). վասն զի իրա-րու հնազանդութիւն և կապակցութիւն չունին։ Ոչ Հայը Հռոմին հետ, ոչ Հռոմը Ռուսին, ոչ Հայը Եսորին, և ոչ Եսորին Եաստուրիին կամ Խպտիին, ոչ Խպտին Հապէշին, ոչ միայն հնազանդութիւն չու-նին, այլ և շատ անգամ սեր ալ չունին. իսկ դաւա-նութեան միակերպութիւն միշտ չունին, վասն զի ա-մէն ազգի դաւանութեան մէջ ալ քանի մը բանի մէջ իրարմէ տարբեր են, և երբեմն իրարու հակառակ. զոր օրինակ՝ Յոյնը Հայէ եկածը նորէն կ'մկրտէ։ Եւ ասով կ'հետևի՝ որ ան ամէն հերձեալ ազգերը իրա-րու հետ ալ կապակցեալ չեն։

Ինչ պատրիարքները տեսնալով՝ որ իրենցմէ մեծ գը-լուխ մը չունին, որուն հետ կապուելով՝ ամէնքն ալ իրարու հետ կապուած ըլլան, կ'բռնադատին ըսելու՝ թէ իրենք հաւասար եղբարք են իրարու, ինչպէս էին ԺԲ. Առաքեալները։ Բայց տասներկու Առաքեալնե-

բուն հաւատար ըլլալը իրենք միայն կ'ըսուցեն, այլ սուրբ Աւետարանը ԺԲ. Առաքեալները ամէնը մէկէն յարգելէն և իշխանութիւն տալէն ետքը իբրև պատրիարքունք, կամ ամէն մէկ ազգի կաթողիկոսներ, անոնց գլուխն որ է Պետրոս և իր յաջորդները զատ կ'յարգէ, և գլխաւորութեան իշխանութիւն տալը կ'ցուցնէ՝ ըսելով. "արածեա՛ զգառինս իմ. արածեա՛ զոչխարս իմ". և դարձեալ՝ "'ի վերայ քո շինեցից զեկեղեցի իմ", և դարձեալ "և դու երբեմն դարձիս և հաստատեսցես զեղբարս քո". և էս "մի հօտ, և մի հովիւ". էն։ Սակայն ուրիշ հաւատար եղբարց մէջ ամենևին կարելի չէ խաղաղութիւն և սէր գտնուիլ, էս առաւել դաւանութեան միակերպութիւն, ինչպէս որ արդեամբք ալ կ'երևնայ. Եւ Քրիստոսի վրայ ամենևին չենք կրնար դնել, որ իր եկեղեցիին անանկ մէկ կառավարութիւն մը դրած ըլլայ, որ դիւրաւ և պզտիկ բանով մը խռովի և հերձի, և շատ դժուարութիւնով միանայ, կամ թէ բնաւ իսկ չմիանայ։ Կամ թէ ըսեմ, ինք ըսած ըլլայ, մի հօտ և մի հովիւ, և ինք իրեն խօսքը մոռցած ըլլալով, տասներկու հատ ինքնիշխան և ինքնագլուխ հաւատար հովիւներ դրած ըլլայ իր հօտին վրայ։

Նշրորդ կապակցութեան պակասութիւնը այս է հերձեալ ազգաց մէջ, որ նոյն ինքն մէկ ազգի մէջ երկու և երեք և մինչև չորս կաթողիկոս և պատրիարք կ'գտնուին, և այն կաթողիկոսներն ալ իրարմէ բաժնուած են, և մէկմէկու հնազանդութիւն չունին։ Նրբեմն բաժանեալ են ըստ նահանգաց. տեղ տեղ բաժանեալ են ըստ թագաւորութեանց, այսինքն՝ ամէն մէկ թագաւորութեան տակ եղող պատրիարքը մէկալը չսեպեր. թէև մէկալն ալ նոյն ազգին պատրիարքը ըլլայ։ Վերջը հոս բերենք խօսքիս. Հռոմէական եկեղեցին բաժանեալ է ըստ ազգաց, ըստ լեզուաց, ըստ թագաւորութեանց, ըստ նահանգաց, ըստ սովորութեանց. բայց միացեալ է ըստ հաւատոց։ Բայց

հերձեալ եկեղեցիներն միացեալ են իրարու հետ՝ Հռոմայէ բաժնուածութիւնով, շատ տեղ միացեալ են ազգով, լեզուով, են. բայց ամէն տեղ ալ իրարմէ ալ բաժնուած են հաւատքով և հաւատքի կապակցութիւնով։

Այսչափ երկայն խօսքերէ կ'հետևի՝ որ հաւատացեալներու այն կապակցութիւնը՝ որ ըստ սուրբ Գրոց այնչափ հարկաւոր է, և զանի միայն Հռոմէական եկեղեցին ունի, առաջ կուգայ կոր միայն ասկէ, որ Հռոմէական ժողովուրդը մէկ ծայրագոյն գլուխ մը կը ճանչնայ՝ փոխանորդ Քրիստոսի. և հերձեալ ազգերու բաժանումը և պառակտումը կ'հետևի միայն նոյն ծայրագոյն գլուխը չընդունելէն։

Ակէ ալ կ'հետևի՝ որ Հռոմայ աթոռոյն գլխաւորութիւնը ճանչնալը անհրաժեշտ և հաւատքի ամբողջութիւնը պահելու համար հարկաւոր է. ոչ միայն սուրբ Աւետարանին մէջ աս նիւթիս վրայօք գրուած խօսքերը ամբողջ պահելու և ուղիղ մեկնելու համար. այլ և վերոյիշեալ անդամներու կապակցութիւնը ամբողջ ունենալու համար։

Այս եկեղեցւոյ ծայրագոյն գլուխն պէտք էր, որ անսխալութիւն ունենայ. չէ դատաստանի վճիռներու, քաղաքական գործոցութիւններու և իր անձին վրայօք բաներու մէջ. այլ միայն հաւատքի վրայօք վճիռ տալու մէջ, և սուրբ Գրոց խօսքերը մեկնելու մէջ. որպէս զի հաւատացեալները վստահ սիրտով անոր առաջնորդութեանը ապաւինին, և անոր վճիռներուն աներկմիտ հաւատան, թէ Աստուծոյ կամքը աս է, և սուրբ Գրոց միտքը աս խօսքիս մէջ տաանկ է, ինչպէս որ վերհագոյն գլուխը կ'մեկնէ Հոգւոյն սրբոյ ազդեցութիւնով։ Այս թէ ոչ՝ բանի մը վրայ վստահ և ապահով չէինք կրնար ըլլալ։ Որովհետև մեր խելքին վրայ վստահելու և հաւատալու ամենեին իրաւունք չունինք, թէ որ ծայրագոյն գլուխն ալ աս շը-

նորհքը չուենենար նէ, շատ բանի չպիտի կրնայինք վըստահապէս հաւատալ։ Կամ թէ՝ սուրբ Գիրքին շատ խօսքը պիտի գիտնայինք, բայց ինչպէս հասկնալ և հաւատալ պէտք է, չպիտի կրնայինք գիտնալ։ Կամ թէ՝ ամէն մէկերնիս մէյ մէկ կերպ պիտի մեկնէինք, և իրարու հետ անվախճան վիճաբանութիւն պիտի ընէինք, և անկէց ալ բան մը չպիտի շահէինք։

Հռոմէական ուղղափառ եկեղեցին իր ծայրագոյն գլխոյն անսխալութիւնը սուրբ Գիրքին խօսքերէն կը քաղէ. բայց մեր հակառակորդները՝ որ աս անսխալութիւնը կ'ուրանան և կ'թշնամանեն, թող սուրբ Գիրքին նոյն խօսքերուն շիտակ մեկնութիւն մը տան, մենք ալ անոնց համոզուինք. բայց աս բանը ըլլալու համար՝ ինծի պէտք է, որ նոյն խօսքերը հոս պարզեմ, և առջևնին դնեմ։

Յայտնի է ամենուն Քրիստոսի ան անմոռանալի խօսքը, որ ըսաւ ԺԲ. Առաքեալներուն մէկտեղ. «ահաւասիկ ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս մինչև 'ի կատարած աշխարհի» (Մատթ. ԻԸ. 20)։ Քրիստոս Առաքեալներուն հետ պիտի ըլլար նէ, արդեօք զանոնք սխալեցնելու համար պիտի ըլլար, չէ նէ զանոնք լուսաւորելու և առաջնորդելու համար. յայտ է՝ թէ լուսաւորելու. նա մանաւանդ թէ անկարելի էր իրեն սխալիլ և սխալեցնել։ Եւ թէ որ Առաքեալները սխալէին, անարգանքը Քրիստոսին կ'ըլլար, որ ամէն իւ ժիր անոնց հետ էր։ Եւ որովհետև կ'ըսէ թէ՝ «զամենայն աւուրս մինչև 'ի կատարած աշխարհի», կ'հետևի՝ որ միայն Առաքեալներուն հետը չպիտի ըլլար, այլ նաև անոնց յաջորդներուն հետ. զի Առաքեալները մինչև 'ի կատարած աշխարհի չպիտի ապրէին, բայց յաջորդները պիտի ապրէին մինչև 'ի կատարած աշխարհի։

Եւ թէպէտ սուրբ Առաքեալները իրենք Հոգւոյն սրբոյ շնորհքովը ամենեւին չսխալեցան հաւատքի մէջ, բայց անոնց յաջորդներէն շատ պատրիարքներ սխալե-

ցան, ինչպէս Աբրիս, Նեստոր, Մակեդոն, Փոտ, և այլք. ասկէ յայտնապէս կ'հետեւի՝ որ Թրիսոսի Առաքեալներուն, և անոնց յաջորդներուն ամէն մէկուն զատ զատ չտուաւ այս անսխալութեան շնորհքը, այլ երբոր ամէնքը մէկտեղ ըլլան սուրբ ժողովներու մէջ, և Պետրոսի յաջորդն ալ անոնց հետ, ան ատեն Թրիսոսի շնորհքը իրենց հետը ըլլալով՝ խոստացաւ անոնց անսխալապէս հաւատքի վճիռները տալ։ Ահա ասանկ կ'տեսնանք՝ որ ամէն մեծ ու տիեզերական ժողովքներու մէջ՝ ուր որ երեւելի պատրիարքներ ժողուած էին, ան ժողովքներուն որոշմունքը՝ վճիռը և նզովքը սուրբ Գրոց համաձայն եղաւ, և ամէն յետագայից ընդունելի։ Բայց այն ժողովքները՝ ուր ամէն պատրիարքներ և երեւելի աթոռներ լման չէին, անոնցմէ շատը սխալեցան, որ եռաբէն չարաժողով ըսուեցան։ Բայց Պետրոս և Պետրոսի յաջորդներն ալ ատանելիութիւնքներէն էին, մանաւանդ որ անոր յաջորդութիւնը ամենեւին չէր կորսուած և ոչ միջահատած. ուստի անոր ալ ներկայութիւնը ամենեւին հաւասար էր ժողովքներու մէջ. և ահա կ'տեսնանք՝ որ առանց Պետրոսի յաջորդներուն ամենեւին սուրբ ժողովք մը գլուխ ելած չէ. բայց առանց անոր յաջորդին շատ չարաժողովներ եղած են։ (Իւ Պետրոսի յաջորդին ամէն ժողովքի մէջ ամէն հայրապետներէն վեր նստիլը նոյն պատմութիւններէն յայտնի է. բայց այս մեր խօսքին նպատակէն դուրս է)։

Բդ՝ Թրիսոս Եկեղեցիին խաղաղութեան և միութեանը համար առ առանձին շնորհմունքը ըրաւ առաքեալներուն, որ ամէնքը մէկ եղած ատեններին՝ առանց սխալելու հաւատքի բաները որոշեն և վճռեն. և միթէ ժողովք չեղած ատենը՝ հաւատացեալները ստիպուէին պիտոր բողոքողներու պէս ապագայ ժողովքի սպասել, որ հակառակութեան տակ եղած բան մը որոշուի, և իրենք ալ խաղաղին. միթէ դիւրին բան էր ստէպ ստէպ ընդհանուր ժողովներ գումարել.

և միթէ Քրիստոս կ'ուզէր այնչափ ատեն իր եկեղեցին յուզման և երկպայութեան և երկպառակութեան մէջ ձգել։ Եւ միթէ սուրբ Գիրքը չի՞յայտներ մեզի, թէ այն Պետրոսը, որ եկեղեցւոյն գլուխ գրուեցաւ, և մէկալ առաքեալներուն հետ անսխալութեան շնորհքը առաւ, նոյն Պետրոսը ինք առանձին ալ աս շնորհքին արժանացաւ յառաջնորդ ողջմութենէն Աստուծոյ, և վասն շինութեան եկեղեցւոյ, և ոչ վասն անձին ինչ արժանեաց։ Եւ ահա Պետրոսի եղած աս առանձին շնորհքը կ'գտնանք աս խօսքերուն մէջ. Պետրոս «դու ես վէմ, և 'ի վերայ այդր վիմի շինեցից զեկեղեցի իմ, և դրունք դժոխոց չնա մի յաղթահարեսցեն». (Մատթ. ԺԶ. 18.)։ Աս խօսքերուս մէջ կ'յայտնուի, որ Քրիստոս Պետրոսին ոչ խօսքին վրայ, այլ անձին վրայ՝ կամ թէ աթոռին վրայ շինեց իր եկեղեցին. բայց կ'հարցնեմ, դրունք դժոխոց ի՞նչ կը հասկցուի. որ չնա այսինքն զայն եկեղեցին չ'պիտի կրնան յաղթել։ Արդեօք դրունք դժոխոց ըսածը մեղքէն և մոլորութենէն ուրիշ բանի մը վրայ կարելի՞ է ուղղակէս առնուիլ։

Սուրբ Գիրքը դարձեալ կ'ըսէ Պետրոսին. «Սիմոն Սիմոն, ահա սատանայ խնդրեաց խարխաբել զձեզ իբրև զցորեան. այլ ես աղաչեցի վասն քո, զի մի պակասեսցին հաւատք քո, և դուն երբեմն դարձցիս և հաստատեսցես զեղբարս քո». (Լուկ. ԻԲ. 31). աս խօսքը թէ որ Քրիստոսի մատնութեան գիշերին վրայ առնենք, ինչպէս որ մեր հակառակորդները կ'ուզեն, ի՞նչպէս շիտակ կուգայ լման խօսքը, վասն զի ան գիշերը թէպէտ Առաքեալները խարբալեցան, բայց Պետրոս ալ չ'կրցաւ հաստատել զնոսա, այլ ինքն չարագոյն ևս խարբալեցաւ. և երեք անգամ ուրացաւ զՔրիստոս, և պակասեցաւ իրեն հաւատքը։ Այլ աս խօսքս պէտք չէ՞ մի առնուլ եռաբի ժամանակի վրայ, և արածեա զոչխարս իմ խօսքով իրեն առաքելական ըլլալէն եռաբի վրայ, ինչպէս որ երբեմն բառն ալ կը

ցուցընէ, «Երբեմն դարձցիս և հաստատեսցես», այսինքն յետ ժամանակաց, ատենն պիտի գայ որ պիտի հաստատես, կամ ատենն ատենն եղբայրներդ հաստատելը քեզի շնորհք մը պիտի ըլլայ իմ Հօրմէս։ Այս այս շնորհքն ալ միայն իրեն համար չէ, հապա նաև իր յաջորդներուն համար, և ասս ալ կը ցուցընէ Երբեմն բառը։ Այս և՛ զի Պետրոս իր առաքելակից եղբայրները հաստատելու հարկաւորութիւն մը չունեցաւ իր կենդանութեան ատենը. բայց իր յաջորդները մէկալ առաքեալներուն յաջորդները ուղղելու և հաստատելու շատ առիթներ պատահեցան, որոնց մէջ Հռոմայ աթոռը ուրիշ աթոռները շտկեց և հաստատեց։ Վասն զի Պետրոս առաքելապետին պէս՝ անոր յաջորդներն ալ առին յԱստուծոյ Հօրէ ասս շնորհքը Քրիստոսին աղաչանքովը, որ իրենց հաւատքը չ՚պակսի, այսինքն հաւատքի բաներու մէջը չ՚սխալին։ Սուրբ Աւետարանին ասս խօսքը թէ որ ասկից ալ աւելի հաւատաստ մեկնութիւն մը կրնայ նէ ունենալ, թող ցուցընեն մեր հակառակորդները։

Քրիստոսի Եկեղեցիին ասս գլխաւոր աթոռին եռքէն պրպտիկ թագաւորութիւն մին ալ տրուեցաւ. և այս թէպէտ Աստուածատէր թագաւորներուն և ինքնակալներուն բարեբարութիւնովը եղաւ. բայց և ոչ առանց նախախնամութեանն Աստուծոյ։ Քրիստոս իր Եկեղեցիին՝ հաւատքի համար քաշած նեղութիւնները ու հալածանքները սեսնալով, խանդաղատեցաւ անոր վրայ. և ուզեց՝ որ ազատութիւն և խաղաղութիւն շնորհէ։ Մանաւանդ Հռոմ քաղքին քաղաքակից քրիստոնեայները իրենց մէջ գտնուած եկեղեցւոյ գերագոյն գլուխն հետ մէկտեղ գետնի տակի դամբանները գոցուելով՝ հաւատքը պաշտելնուն փոխարէն՝ Քրիստոս անոր վարձ տուաւ աշխարհքիս երեսը երևելի ըլլալ. և փոխանակ կռապաշտ ինքնակալութեան նոյն Հռոմ քաղաքը պատկեց քրիստոսապաշտ և խոյ-

բաղադ. եկեղեցական թագաւորութեամբ մը։ Ընանկ թագաւորութիւն մը հաւատքի ամբողջութեանը համար պէտք չէր. բայց հաւատքի աղատութեան համար անշուշտ պէտք էր։

Պէտք էր, որ ինչպէս ամէն մէկ հաւատացեալ ազատ է հաւատքի կողմանէ, անանկ ալ եկեղեցին գըլուխը աղատ ըլլայ աշխարհական իշխանութիւններու բռնութենէն և կողմնակցութիւններէն, և արձակ ըլլայ Քրիստոսի իշխանութիւնը և. հրամանները մեկնելու՝ հրամմելու և քարեցնելու։

Իրաւ Եկեղեցին թագաւորութիւն ունենալը հաւատքի մասն չէ. (այսինքն թագաւորութիւն չունենայ նէ, հաւատքի պակասութիւն մը չունենար), վասն զի սուրբ Գիրքին մէջ յայտնապէս բան մը չկայ առ բանիս վրայօք։ Բայց սուրբ Գիրքին մէջ խօսք ալ կայ, որ կողմնակի Եկեղեցին թագաւորութիւնը կը ցուցնէ. ուստի պարտ է՝ և հարկ իսկ է, որ եկեղեցին թագաւորութիւն ունենայ։ Ընդ համար է, որ Քրիստոս Եկեղեցին ոչ միայն հաւատքին պաշտպան կեցած է, այլ և թագաւորութեանը։ Եւ քանի անդամ որ Եկեղեցւոյ թշնամիներն զանիկայ յափշտակեցին նէ, իրենք փճացան, և թագաւորութիւնը քիչ ժամանակէն նորէն եկեղեցւոյն ձեռքը դարձաւ։ Եւ այն պղծրտիկ թագաւորութիւնն դրեթէ հազար երկու հարիւր տարի է, թէ կառապաշտ և թէ հերձեալ և թէ ուղղափառ հզօր թագաւորներուն և բռնաւորներուն մէջը ապրեր է և դեռ կ'ապրի։

Քրիստոսի Եկեղեցին թագաւորութիւնը կ'պարփակի և ըռելեայն կծանուցուի սուրբ Գիրքին ան խօսքին մէջ, որն որ Պօղոս առաքեալն սաղմոսէն առնելով՝ կ'ըսէ Քրիստոսի համար, թէ է « քահանայապետ յաւիտենից ըստ կարգին Մելքիսեդեկի » (Եբր. Զ. 20)։ Այս խօսքը թէև կերպ կերպ մեկնութիւններ ունենայ, հարկաւ ասա ալ մէջը կ'պարունակի, որ քրիստոս ըստ կարգին Ահարոնի քահանայապետ ըլլալը, այլ

ըստ կարգին Մելքիսեդեկի ըլլալը՝ ասոր համար ալ է, որ իր Եկեղեցին Մելքիսեդեկի պէս՝ քահանայութիւն ալ ունենայ, թագաւորութիւն ալ ունենայ, և ոչ Ահարոնի պէս միայակ քահանայութիւն։ Այս բանիս հաստատութիւն է սուրբ Պետրոս առաքելապետին ըսածն ալ. "այլ դուք ազգ էք ընտիր, թագաւորութիւն, քահանայութիւն, ազգ սուրբ ևն" (Ա Պետր. Բ. 9)։ Իսկ՝ թէ դուք Քրիստոսի Ճշմարիտ հաւատքը ընդունելով՝ եկեղեցիի մը մէջ մնաք, որ հոգեւոր ընտիր ազգ մըն է, և սուրբ ազգ է, թագաւորութիւն ալ ունի, քահանայութիւն ալ ունի, և այլ ամէն բարեմասնութիւններ։

Բայց պիտի հարցնեն՝ թէ հապա ինչո՞ւ Քրիստոս թագաւոր ըլլալէն փախաւ։ Այս ալ կ'հարցնեմ, թէ ինչո՞ւ համար Քրիստոս Պիղատոսին առջեւը իր թագաւոր ըլլալը չուրացաւ. այլ "դու ասես" ըսաւ (Մատթ. ԻԷ. 11.) և աս խօսքը Հրէից քահանայապետները և ամէնն ալ անանկ հասկցան, որ թագաւոր եմ ըսել կ'ուզէ. և աս բանը վրան յանցանք ընելով, գլխուն վրայ ալ գրեցին՝ "թագաւոր հրէից". նա մանաւանդ թէ ուզեցին, որ թագաւոր Հրէից չի գրուի, այլ "ինք ըսաւ՝ թագաւոր եմ Հրէից" գրուի։ Ինանկ է նէ՝ Քրիստոս իր թագաւոր ըլլալը, և իր շինելու Եկեղեցիին թագաւորութիւն ունենալիքը չուրացաւ, և ոչ ալ խափանեց, այլ քարոզու թեան առենը փախաւ, որպէս զի արիւնհեղութիւններ չեղ ելայ, և զի թագաւորութեան առենն ալ եկած չէր. և ինք ալ մարդկանց համար մեռնելէն չխափանուի։

Գ. ԱՄԵՆԱՅՆ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆՑ ՄԱՅՐ ԵՒ ԴԱՅԵԱԿ ԸԼԼԱԼԸ

Երբոր խօսքերնիս կուգայ Հռոմէական Եկեղեցիին ամէն առաքինութիւններու ծնող և սնուցիչ և մեծցընող ըլլալուն վրայ. չքնաղ և հիանալի տեսարան

մը կը բացուի առջևնիս, վասն զի պիտի տեսնանք նախ առաքինութիւն, որ ինքիրմէն շատ գեղեցիկ բան է. և երկրորդ՝ ամէն և ամենակերպ առաքինութիւններ որոնց իւրաքանչիւրը մէյ մէկ կերպ աղուսութիւն ունի։ Յետոյ պզտիկէն սկսեալ և մինչև ծայրագոյն առաքինութիւններ, և մինչև այն ասահման բարձր առաքինութիւններ, որոնց գերազանցութիւնը հասկըցնելու համար ոմանք դիւցազնական կ'կանչեն. բայց ես աս բառը շատ անարդ և տգեղ անուն մը կ'սեպեմ մեզի. մէջը սուտ կրօնի և դից երևոյթը գրանուելուն համար և գերբնական անուն ալ քիչ կը տեսնամ, վասն զի ուղղափառներուն պզտիկ առաքինութիւնն ալ, որ Աստուծոյ համար կ'ըլլայ, գերբնական է։ Ուստի կ'ուզեմ որ այն բարձր առաքինութիւնները կանչեմ աստուածային կամ աստուածայնագոյն կամ ծայրագոյն առաքինութիւններ։ Այս թէ որոնք են աս առաքինութիւնները՝ երթալով պիտի հասկցուի։ Հիմա թողլով այս որոշումը առաքինութեանց, ուրիշ որոշում մը ձեռք առնեմ, այսինքն եկեղեցւոյն պաշտօնեայներուն առաքինութիւնները զատ նկարագրեմ, և եաքը թէ՛ անոնցը և թէ՛ հասարակ ժողովրդեանը մէկ տեղ։

Հռոմէական եկեղեցւոյն պաշտօնեայներուն կամ կարգաւորներուն վրայ երևցած գերբնական և աստուածային առաքինութիւններէն միայն հինգ հատը զլուցելու որ բլլամ նէ, նայն ժամայն կ'երևնայ այս եկեղեցւոյն գեղեցիկ նկարագիրը, և մէկալ հերձեալ եկեղեցիներէն որոշումը։ Այս հինգ գերազանց առաքինութիւններն են՝ կուսութիւն, ձրի ծառայութիւն, խոստովանութեան գաղանիքը պահել, ամէն օր պատարագ ընել. և գիտութիւն՝ ժողովրդին հոգևոր առաջնորդութիւն ընելու։

Կուսութիւնն ինչ մաքուր և պայծառ առաքինութիւն ըլլալը գիտեն և կ'հասկընան ամէնքը. և զարմանալին աս է, որ աս եկեղեցիին ոչ միայն բարձրա-

գոյն աստիճանաւորները կ'կրեն վրանին աս քրիստոսա-
կան կնիքը, այլ և անոնցմէ ստորիններն ալ՝ այսինքն
քահանայները, սարկաւագները և կիսասարկաւագնե-
րը։ Աս առաքինութիւնով կ'զինուին պաշտօնեայք
Քրիստոսի ընդդէմ սիրոյ աշխարհի, և ասով կը
նպաստաւորին ժողովուրդը իբրև եղբարք և իբրև որ-
դիք սուրբք սիրելու, և անոնց հոգևոր պէտքը հոգա-
լու. նաև ասով կ'զօրանան քիչ մը ապրուստով իրենց
մարմնաւոր պէտքը տնտեսելով՝ իրենք զիրենք նուիրե-
լու ժողովրդեան հոգևոր յառաջադիմութեանը։

Բայց մեր հակառակորդները մեզի դէմ կրնան ը-
սել՝ թէ այս առաքինութենէն անկմունքներ կրնան
պատահիլ. բայց անմարմին հրեշտակներուն անգամ
շատ և շատ աւելի անկմունք պատահեր են, քանթէ
Քրիստոսի Լիկեղեցւոյն հողէղէն և մարմնաւոր պաշ-
տօնէից մէջը. այսչափ սիրած է Քրիստոս այս մաքուր
առաքինութիւնը իր պաշտօնեայներուն վրայ, և իր
շնորհքը ղեղած է անոր վրան։

Զրի ծառայութիւնն այնչափ է, որ իրենց հոգևոր
գործողութիւններուն մէջ միտքով անգամ վարձ և փո-
խարինութիւն յուսալը արգիլուած է, թող թէ սա-
կարկութիւն ընել, կամ տրուած ողորմութիւնը չհաւ-
նիլ, կարգ տալը և պտակը դրամով վաճառել։ Ն, ո-
րոնք լսուած բաներ չեն։ Այլ պաշտօնեայք 'ի փառս
Աստուծոյ իրենց հոգևոր պարտքը կ'կատարեն, և ա-
մէն օր պատարագ կ'մատուցանեն. և թէ որ հաւա-
տացեալք ողորմութիւն մը տան նէ, կ'առնուն առանց
որքանը հարցընելու։ Զրի կ'առնեն, և ձրի կուտան։

Խստասվանութեան գաղտնիքը պահելը այնչափ է,
որ ինչուան հիմայ մէկ քահանայ մը չէ գտնուեր, որ
անանկ գաղտնիք մը դուրս հանած ըլլայ. բայց եղած
է քահանայ ալ, որ գաղտնիքը դուրս չհանելու համար
արիւնը թափած է։ Յայտնի է՝ որ սանկ նորասքանչ
առաքինութիւն մը առանց մասնաւոր շնորհաց և օգ-
նականութեանն Աստուծոյ անկարելի է։

Այն քահանայք ամէն օր պատարագ զրուցելը առաքեալներուն ժամանակէն մնացած բարձր և Աստուածայնագոյն զոհագործութիւն մը ըլլալով, ոչ միայն ամէն օր մարդկանց մէջ գործուած մեղքերուն թողութիւն առնելու, և նոր նոր շնորհքներ և ամէն կերպ բարեգործութիւններու օգնութիւն գտնալու առատ աղբիւր մըն է, այլ և նոյն ինքն պաշտօնէից ալ գերագոյն և հոգևորական շնորհաբաշխութիւն, զի այս ահաւոր խորհուրդը կուսակրօնից անձանց զուվացումն է, և ասով անոնց հոգիները ամէն օր կ'հարնանան Քրիստոսի Աստուծոյ։

Քահանայներուն ամէն օր պատարագ զրուցելուն հետը դնենք նէ ժողովրդին մէջէն շատերուն ալ ստէպ ստէպ խոստովանիլը և հաղորդիլը, (և ոչ տարաբարնեերուն միայն, կամ զատկին և ծնունդին), առ ամէն օրուան հոգևոր սեղանը մեզի կ'տանի կ'հանէ առաքեալներուն ժամանակը, որ ասոնք "էին հանապազորդեալք վարդապետութեան առաքելոցն և հաղորդութեան և բեկանելոյ հացին" (Գործ. Բ. 42)։ Լաւ կ'հաւատամ մեզի՝ թէ այս սուրբ Եկեղեցիին և անոր մէջ ամէն օր մատուցուած պատարագներուն համար է մարգարէին ըսած պատգամը. "յաւուր յայնմիկ բղխեսցէ ջուր կենդանի Յերուսաղէմ (այսինքն յեկեղեցւոջ). կէս նորա 'ի ծովն առաջին, և կէս նորա 'ի ծովն որ յետոյ, զամառն և զդարուն նոյնպէս եղիցի։ Եւ եղիցի տէր թագաւոր 'ի վերայ ամենայնի. յաւուր յայնմիկ եղիցի տէր մի, և անուն նորա մի" (Զաքար. ԺԴ. 9)։

Հինգերորդ գերազանց առաքինութիւնն պաշտօնէից Քրիստոսի է գիտութիւն 'ի հոգևոր առաջնորդութիւն։ Մարգարէական խօսքը "շրթունք քահանային զգուշասցին գիտութեան. և օրէնս խնդրեսցեն 'ի բերանոյ նորա" (Մաղաք. Բ. 7) ըսելը՝ կարծես թէ առ քահանայները իրենց անկաճին օղ ըրեր են, և կատարելապէս անոր հետևելով, ոչ միայն դուրսինները պատասխան տալու կրթութիւնը ստացեր են, այլ

և ժողովրդեան ալ երթալով աւելի բարակ հոգեւոր ձամբայ մանալու առաջնորդութիւն ընելով, ինչուան սրբութեան աստիճան հասնելու ջանք կ'ընեն։ Հոս կը պարտաւորիմ քահանայներու հետ ժողովրդեան առաքինութիւններն ալ խառնելով՝ երկուքին մէկտեղ վերան խօսիլ։ Լուղղափառ Հռոմէական ժողովուրդն ալ իրեն հոգելոյ քահանայներէն առաջնորդուելով, և ոմանք ալ քահանայի մը չափ հոգեւոր գիտութեամբ լցուած ըլլալով, ինչ առաքինութիւններ գործ դնելու ջանքով կ'եռան, և երթալով զանոնք աւելցնելու եռանդ ենկած են։ Ի՞նչ աստիճան աստիճան համբերութիւններ, ինչ կերպ կերպ հոգեւոր մտածութիւններով աշխարհ.քիս տառապանքին մէջ միխիթարութիւն գտնալներ, ինչ հաստատ յոյս առ Աստուած. ինչպիսի անձերկիւսա հաւատք, ինչ եռանդուն և մտադիր աղօթքներ. ինչպէս սուրբ պահել կիրակիները ու տօնները. ինչպիսի արթնութիւն փորձութեանց դէմ. ինչ անձնուրացութիւն և մարմնոյ կամքերը կոտրել՝ մեղք չգործելու համար. ինչպէս մեղքէ վախնալ՝ զԱստուած չվշտացնելու միտքով. ինչ բերնի մաքրութիւն ոչ միայն յիշոցքէ, թշնամանքէ և անեծքէ, այլ նաև թերթև բամբասանքէ. երդումը այնչափ կորած է մէջերնին, որ շատը իրաւ տեղ երդում ընելն ալ մեծ մեղք կ'սեպեն. և ոմանք աւելի լաւ կ'սեպեն սատակի ինաս քաշել՝ քան թէ դատաստանի մէջ իրաւ տեղ երդում ընել։ Ի՞նչ եղբայրսիրութիւն իրարու օգնելու՝ աղէկութիւն ընելու, հիւանդները նայելու, ինչ աղքատսիրութիւն ու անոնց վրայ առատաձեռնութիւն. ինչչափ ծածուկ ողորմութիւններ։ Ի՞նչչափ խոնարհութիւն, և զինքը թշնամին և անարգին ոտքին տակը ցածցնել։ Ի՞նչ ծածուկ ապաշխարութիւններ և ճնշումներ։

Այս առաքինութիւններէն շատը աստիճան աստիճան վերանալով աստուածային և գերբաղանց առաքինութիւններ կ'ձեւանան, և ես վերանալով աստուա-

ծայնագոյն և աստուածամերձ կ'ըլլան, և մինչև Սրբութեան բարձունքը կ'թեւակոխեն կ'հասնին։ Ի՞նչ երկայն և անտանելի հիւանդութիւններու լրիկ մնջիկ համբերութիւնով՝ Աստուծոյ կամքին յանձնուելով, առանց տրանջանաց քաղցր մխիթարութեամբ և յօժար սիրտով տանողներ կ'գտնուին։ Ի՞նչ աստիճան ընկերէն չարիք տեսած ըլլալով՝ անոր սրտանց ներել Աստուծոյ համար, և իր հանգիստը մոռցած՝ անոր հոգւոյն փրկութեանը վրայ աշխատիլ՝ հառաչել և աղօթք ընել։ Հաւատքի համար ինչպիսի արիութեամբ հալածանքներ քաշել, ունեցածը լքանել կամ աժան աժան ծախել, աղքատութիւնով և գեշ անուանով անարգաբար աքսոր երթալ, հոն յեսին աղքատութեան մէջ ինկած ըլլալով՝ իր հալածողները արդարացնել, Աստուծոյ կամքը այս է եղեր, անանք չ'գիտնալով բրին, մեր մեղքերը բերաւ աս բաները մեր գլուխը, ըսել։ Հոն իրարու օգնելը անթիւ անհամար։ Այս հոն քահանայներուն ծածուկ պատարիլը և ժողովուրդը խոստովանցնելը և հաղորդելը հիանալի արիութիւն։ Դառնալէն ետքը եղած չարիքը ամենեւին չ'մտիկ, հալածողներուն բարիք ընել։

Աշխարհքը ձգել, քաղաքը թողուլ, լեռները երթալ ճգնութիւն ընել. խոտ ուտելով ապրիլ, (ինչպէս հին առենները եղեր են)։ Լեթ օրը մէյ մը, կամ քառասուն օրը մէյ մը ոսպ ուտել։ Երկնաւոր տեսիլներ տեսնալ. Աստուծմէ յայտնութիւններ ունենալ, ըլլալու բաներու վրայ մարգարէութիւն ընել։ Ժլատկութիւններ ընել. հրաշքներ գործել։

Հաւատքի համար ծեծ ուտել, բանտերը պառկիլ ամիսներով տարիներով, խորունկ հորերու մէջ բանտուիլ, կերպ կերպ տանջանքներ քաշել. սուրերով դանակներով ջարդուիլ, կրակով երիլ մրկիլ, տաք ջուրերով մեռտաղներով խաշիլ, և հաստատ կենալ հաւատքի վրայ։ Ու չ'կարծուի՝ որ աս տանջանքները հաւատքի համար առեն մը քաշուեր է, բայց հիմայ չի

կայ. վասն զի հեռաւոր տեղեր քիչ տաեն առաջ նո-
րէն աս տասնեանքները նորոգուեցան, և մեծ մեծ մար-
տիրոսներ հանդիսացան։ Զի Հռոմէական եկեղեցին
որ տաեն՝ ինչ բան որ պէտք ըլլայ, շուտ մը կ'հանէ.
մարտիրոս պէտք եղած տաեներ՝ շուտ մը մարտիրոսներ
կ'հանէ ճակատ, հեռաւոր երկիրներ քարոզիչ պէտք
է նէ, շուտ մը քարոզիչներ կ'խուրէ, հրաշք պէտք
ըլլայ նէ. հրաշք կը գործէ, լեզուախօսութիւն՝ թարգ-
մանութիւն պէտք ըլլայ նէ, թարգմանութիւն և լեզ-
ուախօսութիւն կ'հնարէ։ Բայց ոչ եկեղեցիին է աս
հանճարը կամ քաջութիւնը, այլ Քրիստոսի, որ կը
խնամէ և կ'զարդարէ եկեղեցին. և Հոգւոյն Սրբոյ,
որ իր շնորհքներովը հանգուցեալ է եկեղեցիին վրայ։

Զգեմ այն ամենայն, և ամէնուն վերջ և գլուխ
եղած առաքինութիւնը զրուցեմ, որ է արիւն թա-
փել Յիսուսոյ համար և հաւատքի համար։ Ի՞նչքան
շատ, նա մանաւանդ թէ ինչքան անթիւ եղած է աս
բնութենէ վեր առաքինութիւնը Հռոմէական եկե-
ղեցւոյ մէջ, որ Քրիստոսի ժամանակէն սկսած՝ և ըղ
Քրիստոս օրինակ և առաջնորդ բռնելով, մինչև մեր
տաեները չեն դադարիր նահատակները իրենց արիւ-
նը թափելէն Քրիստոսի հաւատքին համար։ Դառնամ
հարցնեմ. արդեօք ո՞ր հաւատքի մէջ, կամ ո՞ր հերձ-
եալ եկեղեցիի մէջ կայ ասանկ անձնուրաց առաքի-
նութիւն, և ասանկ արեամբ չափ նուիրել զինքն
Քրիստոսի վրայ։ Յոր վրայ ես ասկից առաջ չեմ
անցնիր. կ'ձգեմ կարգացողներուն՝ որ մտածեն ասոր
վրայ։

Սուրբ Հռոմէական Եկեղեցիին մէջ միայակ մեկ
բան մը կայ, որ ամենուս մեծ ցաւ կ'պատճառէ. և
կ'երևի՝ որ իրեն ալ մեծ անարգութիւն կ'բերէ։ Բ-
ալ ան է՝ որ թէ եկեղեցականներէն և թէ ժողովուրդ-
էն կ'գտնուին ոմանք, որ իրենց մօր եկեղեցւոյ օրի-
նացը ճամբայէն դուրս կ'ապրին, և իրենց անզգայու-
թիւնով աս շնորհալից մօր ամէն շնորհքներէն և ա-

աստիւնութիւններէն զրկուած են, իբր թէ լուսէղէն սրուռ մը մէջ կ'պտտին, բայց մութ խաւար մնացած են։ Իրաւ՝ աս բանը մեծ ցաւի և ըստ ալ արժանի արկած մըն է, բայց իրողութիւնը ազէկ մը քննելն ետքը կ'իմանանք, որ աս բաներն յանցաւորութիւնք՝ ամօթը ու պատիժը կ'մնայ ան ապաշնորհ քրիստոնեայներուն վրայ, իսկ Եկեղեցին կ'գառնայ նորէն նիւթ առաքինութեանց կ'ելլայ, և պտակ վարձուց և պարծանաց։ (Զրեն ալ իր բիծերը ունի։)

Աս ապաշնորհներուն յանցանքը Եկեղեցին նիւթ առաքինութեանց կ'ելլայ, վասն զի ինչպէս Աստուած մարդու բռնադատութիւն չէ դրեր բարի գործելու, այլ ազատ թողուցեր է, ասանկ ալ Եկեղեցին (ինչպէս ամէն բանի մէջ, անանկ ալ աս բանի մէջ) Աստուծոյ և Քրիստոսի ամենեն նմանելով, ջանադատեր իր զաւակունքը՝ որ բարի գործեն, այլ կ'ուզէ՝ որ իրենց կամքովը հեռանին բարիին։ Բայց զանոնք համոզելու և խրատելու համար ինչ աշխատանք և սիրահաստուումներ չքաշեր եկեղեցին իր պաշտօնէից ձեռքովը, ինչ անուշութիւն ինչ ազաչանք. և երբ որ չեն շուտով համոզուիր, ինչ երկայն համբերութիւն, ինչչափ ատեն սպասել։ Ան ամբարիշտը ինչչափ կամակորութիւն ընէ, և թշնամութիւն ցուցընէ, Եկեղեցին չյուսահատիր, կ'յուսայ օր մը գտնալու, որ զանի 'ի բարին որսայ. և երբ որ կ'գտնայ ան օրը, ինչպէս ուրախութեամբ եղածները բոլոր կ'մոռնայ, կ'գրկէ զայն խորթացեալը, ուստ կ'դնէ կորսուած ոչխարը, կ'հեւայ կ'վազէ փարախը մացընելու։ Ինքնասորը հիւանդ պառկեր՝ ամէնուն երեսէն ձգուեր է. Քրիստոսի պաշտօնեայն զանի կ'փնտռէ կ'գտնայ. ուժէ ինկեր է, ժամ չկրնար երթալ, պաշտօնեայն ինք անոր ոտքը կ'վազէ. հիւանդը դեղի տալու ատակ չունի, քահանայն կ'ճարէ անոր դրամ, որ առողջանայ և ապաշխարէ։ Հիւանդը գարշելի վիրերու մէջ գէշ հոտերով փտաեր է, քահանայն ջղտոր ան հոտերը

զի հոգի պիտի վաստակի։ Հիւանդին շունչը չելլար, ձայնը չլսուիր, քահանայն անոր ինչման բերանը կ'մատնեցնայ, որ մեղաց խոստովանութիւն մը ըսէ անկէ, և աղաչակումն շնորհէ, որ անով մեղաւորը թողութիւն գտնայ Աստուծմէ։ Վերջ ընելէ, կամ կ'ըսէ անկէ ձայն մը կամ չըսեր, զղջման նշան մը կամ կ'տեսնայ վրան, կամ չտեսնար, հոգին տալու վրայ է, նոյն ժամը արձակումը կուտայ անոր, որ կարելի է՝ զղջում ունէր նէ, մեղաց թողութիւն գտնայ, մեղքերով հանգերձեալ աշխարհքը չերթայ, դատապարտեալ չելլայ։ Այս ամէն բաները կ'ընէ քահանայն, բայց իրեն հնարքը՝ իրեն հանձարը չէ, այլ ան Հռոմէական Եկեղեցիին վարդապետութիւնն է, որ կ'պատուիրէ իր պաշտօնեայներուն, որ ամէն բան վանդի տակ դնեն. միայն հոգիները վանդի տակ չձգեն. ամէն բան կորսնցնեն, միայն թէ հոգիները գտնան, որոց վրան Քրիստոս մեռաւ։ Պաշտօնեայն եկեղեցւոյ մոռնալով՝ որ Քրիստոս մեռաւ վրան փրկութեան հոգւոց մարդկան. ինք ալ զինքը մահուան վանդի մէջ դնելու պարտական կ'սեպէ հոգւոց փրկութեան համար։ Ուր տեղ որ վանդ մը կայ մահուան, հոն քահանայն կ'գտնուի. վրան զի գիտէ՝ որ իր քահանայութիւնը ան վայրկենին համար է. գիտէ՝ որ Քրիստոս ինչ որ ըսեր է, ինք ալ նոյնը ընելու պարտական է, մէկ խօսքով՝ Քրիստոսի նմանելու է։ Քրիստոսի կեանքին ալ՝ մահուան ալ կենակից ու մահակից ըլլալը իրեն պարտք ըլլալը աղէկ կը ճանչնայ, և Պօղոս առաքեալին հետ մէկտեղ կ'զուցէ «մեծասցի Քրիստոս ի մարմնի իմում, եթէ կենաւք և եթէ մահու, զի ինձ կեանք Քրիստոս է. և մեռանիլ շահ.» (Փիլիպ. Ա. 20)։ Այսանկ մէկ քահանայական նուանդեան և հոգւոց փրկութեան նախանձուն օրինակը ինչպէս գտնուի այն ազգերու քահանայքը վրան, որոնք քահանայութիւնը արհեստ մը ըրած են ապրելու և աղաքնին սնուցանելու. որոնց ջանքն է՝ որ օրուան վաստակը՝ ինչպէս կարելի է, աւելի ընեն սա

կարկուԹիւնով. ժողովուրդը ամչնալով. ևն. որպէս զի առնեընաւն պիտոյքը դիւրաւ հոգան, կամ աւելը ցընելով Եպիսկոպոսին կամ Պատրիարքին տրուելու տուրքը վճարեն։

Դ. ԱՍՏՈՒԾՈՑ ԵՒ ՔՐԻՍՏՈՍԻ ՃԻՀԴ ՆՄԱՆՈՂՈՒԹԻՒՆ

Հռոմէական Եկեղեցին Քրիստոսի նմանող ըլլալը ամէն բանի մէջ կ'երևնայ, Թէ սուրբ Դրքին շիտակ մեկնուԹիւն տալու մէջ, որուն Քրիստոս ալ օրինակ տուաւ աշխարհքիս վրայ. Թէ կապակցուԹեան և միուԹեան մէջ, որն որ Քրիստոս ըսաւ «իցեն մի, որպէս և մեք մի եմք» (Յովհ. ԺԷ. 22)։ Եւ Թէ աւաքինուԹիւններու շարքին մէջ, և ըստ տեղւոյն ԹեմիՀ՝ և ծանր և գերազանց առաքինուԹիւններ գործելու մէջ. բայց ամէն բանէն աւելի եկեղեցւոյ պաշտօնեայները կ'նմանին Քրիստոսի խորհուրդները պաշտելու մէջ. վասն զի պաշտօնեայներնոյն ատենը Քրիստոսի փոխանորդ են. զոր օրինակ՝ պատարագ զրուցելու ատեն՝ Քրիստոսի տեղը կ'անցնին, և անոր ըսած խօսքերովը հացը ու գինին՝ մարմին և արիւն Քրիստոսի կ'կատարեն։

Պատակ ընելու ատեն՝ ինչպէս ըրաւ Աստուած առջի անգամ Ադամայ ու Եւայի, եկեղեցին ալ երկուքը իրարու քով կ'բերէ, և երկուքին հաւանուԹիւնը կ'առնու։ Նոյնպէս մկրտուԹիւն, դրոշմ, և հաղորդուԹիւն և խաղ հիւանդաց տալու ատենները, ինչպէս Քրիստոս ըրաւ կամ ըսաւ, նոյնպէս ալ կ'կատարէ։ Ամուսնոյի խորհրդական արարողուԹիւնը ընելու ատեն՝ առաջնորդը Քրիստոսին տեղը կ'անցնի և անոր կ'նմանի. ասանկ ալ շատ արարողուԹիւններու մէջ։ Բայց ամենէն աւելի՝ Քրիստոսի փոխանորդուԹիւնը ու նմանուԹիւնը կ'ընէ եկեղեցին մեղաց թողուԹիւն տալու ատենը՝ որ կ'ըլլայ խոստովանուԹեան

մէջ։ Վասն զի ան ատեն պաշտօնեայն բոլորովին կը-նայի՝ որ Քրիստոսի հեռաքէն և կամքէն դուրս չելլայ։ Ուստի Աստուծոյ կողմէն կ'լսէ ժողովուրդին իր մեղ-քերուն խոստովանութիւնը. կ'դիտէ՝ որ զղջացեալ է։ Երբոր կ'տեսնայ՝ որ ճշմարիտ դարձ ունի, կ'ընդունի զանիկայ, և արձակում կուտայ, ինչպէս Քրիստոս ալ կուտայ երկինքէն։ Բայց երբոր կ'տեսնայ՝ որ զղջում և առաջադրութիւն չունի, կամ ըրած զրկանքը հա-տուցանելու միտք չունի, կամ աւրած անունը շտկե-լու, կամ քէնը մէկդի ձգելու հաշտուելու. ան ա-տեն արձակումը կ'զլանայ. վասն զի գիտէ՝ որ Քրիս-տոս արձակումի շնորհմունքը տուողը՝ ինք հոն ըլլար նէ, արձակում՝ չէր տար անանկ խոստովանողի։ Ինոր համար կ'խրատէ միայն, և կ'ասէ, որ դարձի գայ։

Այս մասին մէջն ալ՝ հերձեալ եկեղեցիներուն մէջ կրնա՞նք գտնալ Քրիստոսի նմանողութիւն մը, որոնց-մէ ոմանք մեղաց արձակումը ստակով կ'վաճառեն, ո-մանք ալ անխտիր ամէն խոստովանողի արձակում կու-տան՝ առանց ամէն մեղքը և անոնց թիւը զրուցել տալու։ Մենք աս հերձեալ ազգայ վրայ աս յաւալի խօսքերը զրուցելը չ'սիրելնուս համար, ինչպէս ամէն անգամուն ալ կարճ կարճ անցանք նէ, ասանկ աս անգամ ալ միայն միտք ձգելու չափ զրուցելնէս ետև՝ կ'անցնինք կուգանք Հռոմէական Եկեղեցւոյ վրայ, ո-րուն վրան խօսելու ատեննիս ցնծում և փառաւո-րութիւն կ'զգանք։

ՎԵՐՋԱԲԱՆ

Հռոմէական սուրբ Եկեղեցին իր վրան ան նկարագիրը և Քրիստոսական կիրքը ունենալէն ետքը՝ ամենեւին չերկբայիր, որ ինք Քրիստոսի հօտը՝ կամ աւնոր հաստատած եկեղեցին ըլլայ. նմանապէս չերկբայիր՝ իրեն սուրբ Առաքեալներին հետքին վրայ ինչուան հիմայ շիտակ գացած ըլլալուն վրայ։ Այլ միայն իր ջանքը ան է, որ ինչպէս ինչուան հիմայ շիտակ գացեր է, ասկից ետքն ալ Քրիստոսի շնորհքովը անանկ շիտակ երթայ։ Եւ իր պաշտօնեայներուն վրայ ազդէ այն շնորհքը և ճշմարտութիւնը, ինչ որ ինք վերէն Քրիստոսէն կ'ընդունի իր վրան։ Եւ իր ժողովրդականներուն ազդէ ինչքեցնէ այն եռանդը և ուղղութիւնը, ինչ որ Առաքեալներէն մինչև հիմայ եկած ժողովուրդը ունեցեր է. և այն ուղղութեան մէջ հանապազորդելով՝ հասնին 'ի կէտ կոչմանն Քրիստոսի։

Եւ ասանկ առաջնորդելուն համար ժողովրդեանն Քրիստոսի՝ հաստատ յոյս ունի, որ աս կերպով և ճշմարտութիւնով պիտի տեւէ ու ապրի աշխարհքիս վերջայ, և հասնի մինչև աշխարհքին վերջին օրը. վասն զի աներկբայ կ'բռնէ Քրիստոսի այն խօսքը. թէ "ես ընդ ձեզ եմ զամենայն աւուրս՝ մինչև 'ի կատարած աշխարհի"։ Եւ մեկը չըսէ, թէ այս խօսքը Քրիստոս տասներկու Առաքեալներուն ըսաւ, և հիմայ ԺԲ. Առաքեալներուն յաջորդները Հռոմէական եկեղեցիին մէջը չեն։ Այլ՝ առաքելոցմէ ոմանց աթոռները դուրս են, բայց նոյն ազգերէն ուղղափառ Պատրիարքներ կամ Եպիսկոպոսներ կամ Կաթողիկոսներ կան Հռոմէական Եկեղեցիին մէջը, և անոնց միջնորդութեամբ

ը սոյդ է՝ որ տասներկու առաքեալներուն յաջորդ-
ները ներկայ են սուրբ Եկեղեցւոյ մէջ. և այս պատ-
րիարքները կամ կաթողիկոսները՝ որ սուրբ առաքեալ-
ներէն ժառանգեցին հաւատքի միութիւնը, և եկե-
ղեցւոյ անդամոց և գլխոյն կապակցութիւնը, և սուրբ
Վիրքերու շիտակ մեկնութիւնը և առաքինութիւն-
ներու զեղումը, անոնք են ճշմարտապէս յաջորդք ա-
ռաքելոց, որք Պետրոսէն չզատուեցան, և անոր հետ
մէկ տեղ մի եկեղեցի կազմուած են. «մի հօտ և մի
հովիւ»։

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ. ՍՍՌ-ՈՒՄ

ՎԵՐՋ

Գին 100 դրամ.

ՀՀ Ազգային գրադարան
NL0686582